

Ի վերջո, մի նկատողություն ևս, որ անձամբ մեզ է վերաբերում: Սոսեյով Հովհաննես իմաստասերի «Անկիւնափոր թվեր»-ի մասին, որոնք «միջանկյալ և կցկտուր են», պրոֆ. Աշ. Արրահամյանը գտնում է ոչ «դարմանալի», «որ ոչ ոք նրանց վրա առանձին ուշադրություն չի ցարձրել» (էջ 43): Այսպիսի անձանց շարքին նա գասում է, իմիջիայրոց, և մեզ, որն՝ «ուսումնասիրելով Հայաստանի և Վրաստանի գրական գիտությունների պատմությունը, տեղեկություն չի ունեցել և ոչինչ չի գրել Հովհաննեսի նշված աշխատության մասին իր «Հայաստանի և Վրաստանի գրական գիտությունների շուրջը» վերտառությամբ արժեքավոր ուսումնասիրության մեջ» (էջ 43—44):

Սակայն հարգելի հեղինակը ինքն իրեն հակասում է, երբ հետևյալ էջում (45) նշում է, որ «Անկիւնափոր թվեր»-ի «տեքստը տամարի հետ միասին հիշատակված է» Ե. Տեր-Մինասյանի համապատասխան հոդվածում (1901), ինչպես նաև մեր «Վարդապետք հայոց հիւսիսային կողմանց» գրքում (1928) և մեծանուն Հր. Աճառյանի «Հայոց անձնանունների բառարան»-ի 3-րդ հատորում (1946):

Հետևապես, Հովհաննես իմաստասերի «Անկիւնափոր թվեր» գործը մենք օգտագործել ենք մեր համապատասխան աշխատության մեջ գրեթե 1928 թվականին: Իսկ թե ինչու 1930 թվականին մի ուրիշ աշխատության մեջ դրա մասին լսել ենք, դա բոլորովին ուրիշ խնդիր է:

Չնայած նշված թերություններին, կուսկածից դուրս է, որ «Հովհաննես իմաստասերի մատենագրությունը» նշանակալի ներդրում է հայագիտության քննադատում, որից հավասար չափով պիտի օգտվեն հայագետ-պատմաբանները, բանասեր-գրականագետները, լեզվաբանները, ճրագրիտ գիտությունների մասնագետները, փիլիսոփաները և այլն:

Լ. Մելիքսեթ-Յեկ

## ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՊԱՐՍԿԵՐԵՆ ՀՐՈՎԱՐՏԱԿՆԵՐԻ 1-ԻՆ ՊՐԱԿԸ

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Չեռագրատունը (Մատենադարանը), որը աշխարհի խոշորագույն ձեռագրատներից մեկն է, իր հարուստ ֆոնդերում ունի նաև մեծաքանակ արարատառ (արաբերեն, պարսկերեն, ադրբեյջաներեն և թուրքերեն) ձեռագրեր, որոնք հսկանյութ են տալիս Հայաստանի և Մերձավոր Արևելքի երկրների կուլտուրաների ուսումնասիրության համար:

Մատենադարանը շնորհակալության արժանի աշխատանք է կատարում հրապարակելով և յայն մասսաների սեփականությունը պարձնելով հեռավոր դարերից մեզ հասած այդ մեծարժեք մատենագրական հուշարձանները: Մինչ այժմ զգալի աշխատանք է կատարվել հայ մատենագրերի հրապարակման ուղղությամբ: Սակայն պարսկական ձեռագրերից և արխիվային վավերագրերից դեռևս ոչինչ չէր հրապարակված:

1956 թ. յույս տեսավ Հ. Ի. Փափագյանի կազմած Մատենադարանի պարսկերեն վավերագրերի 1-ին գիրքը, որը բնագրվում է ժԵ—ժՁ դդ. հրովարտակները<sup>1</sup>:

Հայաստանի պատմության, տնտեսական և սոցիալական կյանքի բարդ և լրիվ շարժարանված հարցերի լուծման համար մեծ նշանակություն ունեցող այս պարսկերեն վավերագրե-

<sup>1</sup> Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, 1, Հրովարտակներ, պրակ առաջին (ժԵ—ժՁ դդ.), կազմեց Հ. Գ. Փափագյանը, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Երևան, 1956, 315 էջ:

րի հրատարակման ուղղությամբ Մատենադարանի նախաձեռնությունը անշուշտ խրախուսելի և խոշոր ներդրում է հայագիտության և հատկապես արևելագիտության քննազավառում:

Անհրաժեշտ է նշել, որ վավերագրերի հայերեն և միաժամանակ ռուսերեն թարգմանությունները գիտական մեծ հետաքրքրություն են ներկայացնում այդ ժամանակաշրջանով զբաղվող ոչ միայն միութենական, այլև համաշխարհային գիտական շրջանների համար:

Հաճությամբ պիտի արձանագրել, որ հրովարտական վերժանման և թարգմանության այս դժվարին գործը գտել է իր իսկական մշակին, այն իմաստով, որ նախ՝ զանազան պատճառներով, մինչև սույն աշխատությունը, Մատենադարանի պարսկերեն վավերագրերից ոչինչ չէր հրատարակված, իսկ այդ ուղղությամբ էլ եթե կատարվել էին որոշ ուսումնասիրություններ, ապա, ինչպես Ի. Պ. Պետրուշևսկին է նշում՝ դրանք եղել են շափազանց թերի, և երկրորդ այդ վավերագրերի վերժանումը և թարգմանությունը պահանջում էին ոչ միայն պարսկերեն լեզվի խորը իմացություն, այլ նաև Հայաստանի և Պարսկաստանի պատմական տվյալ կոխայի սոցիալ-տնտեսական կյանքի բազմակողմանի ճանաչողություն: Հ. Փափազյանի ներդրումը կայանում է նրանում, որ նա կարողացել է Մատենադարանի հարուստ գանձարանից հրատարակ հանել և գիտական աշխարհին մատչելի դարձնել այնպիսի փաստաթղթեր, որոնք գալիս են մեծ չափով հարստացնելու 15—16-րդ դարերի ինչպես բաղաբաղական, այնպես նաև սոցիալ-տնտեսական հարաբերությունների պատմության ուսումնասիրության համար անհրաժեշտ պատմական սկզբնաղբյուրների ոչ հարուստ ցանկը:

Հայտնի է, որ պարսկերեն հրովարտական մեծ մասամբ գրված են քմահաճ ձևագրերով, այնտեղ բացակայում են արարատառ գրերի ընթերցման համար կական նշանակություն ունեցող, նրանց բաղաբաղական մասերը հանդիսացող ատամիկները և հատկապես առանձին տառերի կետերը: Իսկ այս բոլոր բարդություններին եթե ավելացնելու լինենք գրիչների կամայական, այլարանական ավելորդարանությունները, պատկերը պարզ կդառնա: Այդ տեսակետից անձնանունների, տեղանունների կամ «սալաղ»-ի թվերով գրված չափերի ու գումարների վերժանումը և հաշվումը պահանջում է արտակարգ զգուշություն և ուշադրություն: Վավերագրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրանք գրված են տարբեր գրությամբ: Այստեղ կարելի է հանդիպել «նասթալիդ», «չիրաթե», «գիվանի», «թաալիդ», «ոհկա» և «նասխ» կամ նրանց խառնուրդը հանդիսացող գրությունների, որոնց ուսումնասիրության հարցը ինքնին մեծ հետաքրքրություն է ներկայացնում: Փափազյանին հաջողվել է հաղթահարել այս բոլոր դժվարությունները:

Գրախոսվող հատորում հրատարակված են ԺԵ—ԺԶ դարերի 23 պարսկերեն հրովարտական լուսանկարները, նրանց պարսկերեն վերժանված ընթերցումը և հայերեն ու ռուսերեն թարգմանությունները: Գրքին կցված է կազմողի ընդարձակ առաջաբանը (էջ 1—41), որտեղ նախապես տրված է Մատենադարանում պահվող արարատառ վավերագրերի ընդհանուր բնութագիրը, համապատասխան խմբավորումներով:

Առաջին խմբի մեջ են դրվել շահերի, տեղական խաների և հոգևոր ղեկավարների ֆերմանները, հորմերը, թաալիդաները, վասիլաները, ֆաթվաները և միսալները: Երկրորդ խմբի մեջ են դասվել դարալաները, վակֆնամաները, իջարանամաները և այլ փաստաթղթերը, որոնք իրենցից ներկայացնում են հողի առուծախի և այլ գործարքների պաշտոնական (շարիաթական) արձանագրություններ: Երրորդ խմբին են պատկանում սնուրնամաները, շահաթնամաները, հոջաթնամաները և այլ վավերագրերը, որոնք վերաբերում են առանձին մարդկանց, կամ գյուղական համայնքների միջև այլևայլ հարցերի կարգավորման ոչ պաշտոնական արձանագրություններին:

Այնուհետև համառոտ, բայց գիտական վերլուծության են ենթարկված վավերագրերի վերոհիշյալ առանձին խմբավորումները և տրված է նրանց նշանակությունը տվյալ կոխայի պատմության և ֆեոդալական պետական-հասարակական սիստեմի իրավական նորմերի ուսումնասիրության տեսակետից: Այստեղ ուշադրվում է այն փաստը, որ Հ. Փափազյանը՝ ուսումնասիրելով այդ հրովարտականները, գալիս է այն եզրակացության, որ դրանք միաժամանակ արտացոլում են ֆեոդալական հասարակության ռեալիզմի հակասությունների՝ հատկապես կենտրոնական իշխանության թուլության, ֆեոդալական մասնատվածության, դրա հետևանքով ծայրամասերում տիրող անիշխանության և ֆեոդալների, զինվորականության և պետական պաշտոնյաների, ինքնիշխան ու կամայական վարքի փաստերը (էջ 12):

Շեղինակը նկարագրել է Մատենադարանի արարատառ վավերագրերի ուսումնասիրության

<sup>1</sup> И. П. Петрушевский, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI—начале XIX вв., стр. 17.

պատմությունը, ցույց է տվել այն ամենը, ինչ այդ ուղղությամբ կատարվել է նախասովետական և սովետական շրջանում: Առաջարանի 23—41-րդ էջերը նվիրված են ժողովածուի մեջ գետնիկված հրովարտականների վերլուծությանը և արժեքավորմանը, որը, շնայած համառոտ, բայց գնահատելի բանալի է տալիս հետագա ուսումնասիրողներին համապատասխան նյութեր քաղելու և եղրակացությունների հանգելու տեսակետից: 43—75 էջերում տրված է հրովարտականների հայերեն թարգմանությունը:

Գիտական մեծ արժեք է ներկայացնում հրովարտականների մասին Փափագյանի տված ճանփադրությունները, որոնք վերաբերում են հրովարտականների ներկա վիճակին և վավերագրելու հիշվող պատմական դեմքերին ու դեպքերին և կազմված են ամենայն ուշադրությամբ ու գիտական բարեխղճությամբ:

Աշխատությանը կցված է նաև հարկային, սոցիալական, վարչական և այլ տերմինների բառարան: Տերմինների մեկնության գործում հեղինակը երևան է բերել ոչ միայն լեզվագիտական խոր գիտելիքներ, այլ նաև այդ տերմինների առաջացման, իմաստի և նրանց զարգացման ու ձևափոխման պատմական պրոցեսի լավատեղյակություն: Ընդ որում՝ ելնելով բուն վավերագրների և այլ պատմական աղբյուրների ուսումնասիրությունից, որոշ տերմինների բացատրությունը տրված է առաջին անգամ:

Կազմողի այս ամբողջ աշխատանքը մեծ բարեխղճությամբ և գիտական բարձր մակարդակով ուսերենի է թարգմանել Կ. Ա. Մելիք-Օհանջանյանը, որը գրավում է գրքի 127—241 էջերը:

Այնուհետև բերվել են հրովարտականների լուսանկարները և նրանց պարսկերեն վերծանված բնագրերը: Աշխատությանը հայերեն և ռուսերեն լեզուներով կցված են անձնանունների, աշխարհագրական անունների, հարկային, սոցիալական, վարչական և այլ տերմինների ցանկեր:

Սույն հատորում ամփոփված ժՆ—ժԶ դարերի 23 հրովարտականներից 4-ը տրված են Կարա Կոյունլունների և 3-ը Աղ Կոյունլունների օրոք: Փաստաթղթերի մեծ մասը՝ 13-ը, պատկանում է Անֆյանների ժամանակաշրջանին, 1-ը՝ Ազբերայանի բեկյարբեկությանը, 1-ը՝ Քարթլիի Սիմեոն թագավորին, իսկ վերջինն էլ տրված է Ոստանի Կարախան բեկի օրոք:

Առանձին արժեք են ներկայացնում 15-րդ դարի 5 բնագիր հրովարտականները, որոնք լույս են սփռում այդ ժամանակվա սոցիալական հարաբերությունների պատմության մի շարք թույլ լուսարանված կողմերի վրա: Հատկապես դրանք վերաբերում են հայոց եկեղեցու, ինչպես նաև հայ աշխատավոր մասսաների իրավունքների հարցին: Նրանք որոշ շահով պարզաբանում են նաև «հայոց եկեղեցուն և հայ հոգևորականությանը տրվող հարկային իմունիտետի՝ «մուաֆու-թյան» էությունն ու բնույթը» (էջ 25): Այս հրովարտականների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հայ հոգևորականությունը հարկերից ազատված է եղել, շնայած, իհարկե, այդ կարգը հաճախ է խախտվել պետության կամ նրա պաշտոնյաների կողմից: Հեղինակը ցույց է տալիս, որ հարկերից ազատվելու այդ երևույթը կրել է տարբեր անուններ, ինչպես, օրինակ՝ «մուաֆ», «մուսալամ», «մարֆու-ուլ-կալամ» կամ «մավզու» (էջ 27):

Անֆյանների ժամանակաշրջանի հրովարտականներից մի քանիսը նույնպես վերաբերում են եկեղեցու հարկային մուաֆության հարցին, հատկապես Տաթևի և Հավուց թառի Ամենափրկչի վանքին տրված հրովարտականները (էջ 53—56): Ուսումնասիրելով այս փաստաթղթերը՝ հեղինակը գալիս է այն ճիշտ եզրակացության, որ «Անֆյանների տիրապետությունը ոչ մի կական փոփոխություն չէր մտցնում գոյություն ունեցող հարկային սիստեմի մեջ և ոչնչով չէր թևեղանում աշխատավոր գյուղացիության՝ ռայաթների վիճակը» (էջ 27): Հետաքրքիր է Անֆյան Շա: Իսմայիլ Ա-ի հրովարտակը Հավուց թառի Ամենափրկչի վանքն ու վանքի հոգևորականությանը մի շարք պետական հարկերից և այլ պարտավորություններից ազատելու մասին (էջ 54): Հրովարտակում նշվում են հետևյալ պարտավորությունները՝ իխրաջաթ, ավարիզաթ, դասթանդազ, սավարի, նամորդար, ջավալիդի, գարև շերիթ, թաֆավութե ջիզյա և այլն (էջ 55): Ըիշտ է նկատում հեղինակը, որ այդ հարկերի շարքում կան այնպիսիները, որոնք մինչ այժմ հայտնի չեն եղել: Օրինակ՝ ազդար, նամորդար, ջավալիդ և գարև շերթ հարկերը, որոնց մեկնությունը տալիս է ինքը հեղինակը:

Անֆյան Շահ Թահմազ առաջինից մնացած յոթ հրովարտականները, որոնց մեծ մասը վերաբերում է Աղուլիսի, Տաթևի և Մակվի վանքերի վակֆային իրավունքներին, օգնում են պարզելու հարկային սիստեմի կարևոր մի քանի հարցեր: Օրինակ՝ հեղինակը արդարացիորեն նշում է, որ Աղուլիսի Թովմա առաքյալի վանքի վանաֆորը հարկերից ազատելու և վանքապատկան հողերի նկատմամբ նրա կալվածատիրական իրավունքները հաստատելու մասին տրված հրովարտակից պարզորեն երևում է, որ, նախ՝ ամբողջ գյուղի վրա դրված հարկից բացառվում էր վանքը, և, երկրորդ՝ գյուղացիները հաճախ են փորձեր կատարել խախտելու այդ կարգը, հատ-

կապես այն պատճառով, որ հարկը վճարվում էր դյուղի ամբողջ վարելահողերի, այդ թվում և վանքապատկան հողերի համար: Հրովարտակում ասվում է. «Արքայական հրաման եղավ, որպեսզի Օրդուրագի, Ազատ Ջիրանի և այլ [վայրերի] դաբուղտներ, մելիֆներն ու քյաղխուղաները, հակառակ [սույն] հրամանագրի և ապօրինի կերպով երբևէ Ազուխի վանքի վանահորից ոչ մի դինար և ոչ էեկ ման բերք չպահանջեն: Ով որ հիշյալ վանքին [պատկանող] հողերում, որանկ էլ որ [այդ հողերը] գտնվելիս լինեն, վարուցանք անի, իր բահրաշեն, բստ կարգի և սովորույթի, հանձնի հիշյալ վանահորը, [իսկ], ինչ որ [նախորդ] տարիներում նրանից ապօրինի կերպով վերցրել են, ապացուցվելուց հետո ետ վերադարձնեն և չհակառակեն: Վերահիշյալ մահալի վանականները հիշյալ վանահորը հասանելիք տուրքերը հասցնեն նրան» (էջ 59—60):

Այնուհետև մեծ հետաքրքրություն է ներկայացնում 1577 թ. Աեֆյան Շահ Իսմայիլ երկրորդի ժամանակ բարձրագույն Դիվանին տված հրովարտակը, որի մեջ ասվում է. «Բարձրագույն և սրբազնագույն Դիվանի, հրամանն այն է, որ վարվեն համաձայն կից հրապարակված հաղթական բանակի բանակատեղի դատարանի օրինակելի Միսալի, նրա բովանդակությունից և իմաստից չհեղվեն, ամենալուսավոր Շահի որոշումը ուղեցույց համարելով, նրա սահմաններից դուրս չդան և խուսափեն սրբազան Կաթիբի հակառակելուց, արդպիսիք կարժանանան արքայական նախատիների ու հանդիմանության: Զուխուր-Սաադի բեկլուարեկը և տեղի Շահիարի մուքասադ-դիները պարտավոր են օգնել և որևէ մեկի կողմից ապօրինի հակառակության տեղի չտալ» (էջ 67):

Այս հրովարտակներից երկուսն էլ, որ դյուղացիները խուսափել են հնազանդվել կալվածատեր ֆեոդալներին, չեն վճարել նրանց հասանելիք բերքի բաժինը ու այլ տուրքերը և այլն: Հետևաբար, ինչպես հեղինակն է գրում, այս հրովարտակը «ռայաթների կողմից կալվածատեր-ֆեոդալների դեմ մղվող սոցիալական պայքարի պատմության ուսումնասիրության տեսակետից առանձին ուշադրության արժանի է» (էջ 34):

Հրովարտակների թարգմանությունը, ինչպես ասվեց, բնահանրապես կատարյալ է և անվերապահորեն կարող է օգտագործվել որպես հավաստի սկզբնաղբյուր: Անշուշտ կան որոշ իմաստով վիճելի մեկնարանություններ, որոնք մասամբ հետևանք են առանձին տեքմիներրի և բառերի երկիմաստության: Նույն բառը հաճախ տարբեր կապակցության մեջ տարբեր իմաստ է պարունակում, ուստի և առաջին հայացքից կարող է թվալ, թե թարգմանիչը հետևողական չի եղել և չի կարողացել միօրինակություն պահպանել: Պետք է ասել, որ ընկ. Փափազյանին հիմնականում հաջողվել է որսալ այդ նրբությունները, որոշ ղեկավարում, սակայն, տեղի տալով նման աշխատանքների ընթացքում անխուսափելի հատ ու կենտ վրիպումների: Այսպես օրինակ՝ հրովարտակ № 18-ում (էջ 279)

احكام سلاطين سابق که در این باب صادر شده بود  
 նախադասությունը թարգմանված է այսպիսով՝  
 «... նախկին թագավորների կողմից այս առիթով հրապարակված նրամանագիրը» (էջ 66).  
 պետք է լինի հրամանագրերը: Հրովարտակ № 8-ում «ماك قديم بوانك طابق مباداه اند»  
 թարգմանված է «և այն տուրքը (Թասմ), որ հին ժամանակներից տվել են Տաթևի վանքին» (էջ 53). պետք է լինի «այն տուրքերը»:

Ի՞նչ կարծիքով առանձին տեքմիներրի կամ հասկացողությունների թարգմանության մեջ, որոշ ղեկավարում, կարելի էր միատեսակություն պահպանել: Այսպես՝ օրինակ. «صرف» բառը հրովարտակ № 11-ում (էջ 57) «տեղիները» տակ է թարգմանված, իսկ հրովարտակ № 12-ում (էջ 58) «տարամադրության տակ»: «متعلقان» բառը հրովարտակ № 1, 4-ում (էջ 43, 47) թարգմանվել է «կապ ունեցող մարդիկ», հրովարտակ № 3, 6-ում (էջ 45, 50)՝ «ենթակա մերձավորներ», իսկ հրովարտակ № 2-ում (էջ 44)՝ «պարզորեն «երա մարդկանց»: Նույնը կարելի է ասել նաև «مستمر»  
 «... համ նույնիսկ سابق قديم» բառերի մասին: «تسور» բառը 14, 17, 53, 58, 59  
 և այլ էջերում թարգմանվել է «կարգ», մինչդեռ 49 և այլ էջերում՝ «օրենք»:

«...» կամ նրա հոգնակին «...» 44, 46, 50, 59, 62 և այլ էջերում թարգմանվել «օրենք», մինչդեռ 58 և այլ էջերում այն թարգմանվել է մի ղեկավարում «ձեռ», մյուս ղեկավարում «կարգ»: «قانون» բառը 50 և այլ էջերում թարգմանված է «կանոն», 47, 53 և այլ էջերում՝ «օրենք»: «...» բառը 14, 46, 48 էջերում թարգմանված է «ընկալունկում» [օրենքներ], իսկ 50րդ

